

«Շիրակացու ճեմարան»  
Միջազգային գիտակրթական համալիր  
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ  
2025-2026  
Մաթեմատիկա (8-րդ դասարան)



Ազգանուն Անուն Հայրանուն \_\_\_\_\_

Դպրոց \_\_\_\_\_

Դասարան \_\_\_\_\_ Խումբ \_\_\_\_\_



Մաթեմատիկան թագուհին է բոլոր գիտությունների...

Կ. Գաուս

Մաղթում ենք հաջողություն:

1. Հայտնի է, որ  $\overline{aba}$  թիվը բաժանվում է 13-ի: Բաժանվո՞ւմ է արդյոք 13-ի  $\overline{bab}$  թիվը:  
Պատասխանը հիմնավորել: Քանի՞ այդպիսի եռանիշ թիվ կա: (4 միավոր)

2. 1-ից 9-ը թվանշանները օգտագործելով մեկական անգամ կազմել են երեք եռանիշ թվեր, որոնց գումարը հավասար է 1665: Այդ թվերի առաջին և վերջին թվանշանների տեղերը փոխեցին և կրկին գումարեցին: Ի՞նչ թիվ ստացվեց: Պատասխանը հիմնավորել: (4 միավոր)

3. Ճարտարապետը նախագծեց մի բազմաբնակարան շենք: Շենքի համար հատկացված տարածքը չափազանց փոքր լինելու պատճառով նա երկուսով կրճատեց մուտքերի քանակը և ավելացրեց ևս երեք հարկ: Պարզվեց, որ նոր նախագծով շենքն ուներ ավելի շատ բնակարաններ, քան սկզբնականը: Այնուհետև ճարտարապետը ցանկացավ հեռացնել ևս երկու մուտք և ավելացնել ևս երեք հարկ: Կարո՞ղ է այս փոփոխությունից հետո շենքն ունենա ավելի քիչ բնակարաններ քան սկզբնական նախագծման ընթացքում: Պատասխանը հիմնավորել և բերել օրինակ: (4 միավոր)

4. Հաշվել արտահայտության արժեքը.  $\frac{1 \cdot 2 + 2 \cdot 3 + 3 \cdot 4 + 4 \cdot 5 + \dots + 2024 \cdot 2025 + 2025 \cdot 2026}{1^2 + 3^2 + 5^2 + \dots + 2025^2}$ : (4 միավոր)

5.  $ABCD$  քառակու  $BC$  կողմի  $BD$  անկյունագծի վրա կառուցված են համապատասխանաբար  $BEC$  և  $BFD$  հավասարակողմ եռանկյունները, այնպես որ երկուսն էլ գտնվում են  $BD$  ուղղի միևնույն կողմում: Գտնել  $FE$  հատվածի երկարությունը, եթե քառակուսու կողմը հավասար է 10 սմ-ի: (4 միավոր)